

Հ. ՅԱԿՈԲՈՍ ՎՐԴ. ԲՈՍՊԸՅԸՔԵԱՆ

(1886–1981)

26 Յունիսի ախաթառ աղբարացը տուգի շղարչով մը պիտի պատէր Մխիթարեան Միաբանութեան և Մխիթարեան մեծ ընտանիքին անդամներուն ախրները: Հ. Յակոբոս Վրդ. Բոսպըյըքեան, և՛ թափառաշունչ և՛ անհատական տարիներու քահանայական ու կրթական վատարկը ուսին, իննսունհինգամեայ խոր ծերութեան մէջ, կը մեկնէր դէպի իր յաւիտեանական հանգիստը:

Ծնած էր 1886ի Ապրիլ 29ին, Պրեճիկ: Նախ կը յաճախէ տեղւոյն Աղարեան վարժարանը: 1901ի զարնան, Մաջիտեան վարդերուն հետ, չքնաղ վարդ մըն ալ կը բացուի փոքրիկ Յովսէփի արտին մէջ, կրօնաւարական կեանքի նուիրումով թուան փափաքը. ու ինքն ալ չուտով կը դառնայ վարդ մը Մխիթարեան պարտէզին մէջ:

Ուսումնասէր ու բարեպաշտ պատանին, 1905ին, ուսման առաջին չորսնը աւարտելով՝ կ'անդամակցի Միաբանութեան, եւ տախտելով յանձն կ'աննէ զինուորագրուիլ Մխիթարի հետեւորդներու շարքին:

1911ի Յունիս 4ին, յետ քոլորելու փիլիսոփայական եւ աստուածաբանական ուսումները, ահա վը բարձրանայ Սուրբ Սոբան, ձեռնադրուելով վանքին Աբրահայր՝ Գերպ. Իգնատիոս Արք. Կիւրեղեանին:

Այնուհետեւ կը բացուի իր առջեւ գործունէութեան ասպարէզը: Կը դառնայ զինք փակոյն Սուրբատմափայլեանի մէջ, իբր հակողապետ եւ ուսուցիչ: 1913ին կը հանդիպին իրեն Պարտիզակի մէջ, ուր Մխիթարեաններու ունեցին առաջնութիւն և վանատուն. 1915ի տեղահանութեան օրերուն՝ կը փախչի Պրեճիկ, եւ աղէտէն ճողոված՝ 6-7 ամիս վերջ կ'անցնի Պոլիս, պաշտօնավարելու նախ՝ մեր Բերայի վարժարանին եւ ապա Քաղկեդոնի մեր որբանոցին մէջ:

1922ին Վենետիկ վերադարձած, կը պաշտօնավարէ Մխիթարեան տարարանին մէջ, նախ իբր օգնական, ապա իբր վարիչ. տպագրած է

1926ի Թէոդիկի տարեցոյցը: Այդ թուականին վերջերք դինը կը դըտնենը Միլիթարեան Միլիթարեան ուրբանացին գլուխը, չորս տարի շարունակ հայրօրէն միլիթարելու եւ կրթելու ապրիլեան դժբախտ տեղումը:

1930ին պահ մը կանգ կ'առնէ Պուլքէշի մէջ, արժանաւորապէս ներկայացնելու Միլիթարեան Միլիթարեան Միլիթարեան՝ հայկական եկեղեցական ու գրական ցուցահանդէսին: Անկէ կ'անցնի Պուլիս, իբր տեսող Միլիթարեան վարժարանին, ուր կը մնայ եօթը տարի: Այս շրջանին է որ Հ. Յակոբոս Վրդ. կը հասցնէ ու կը հասունցնէ բազմաթիւ սաներ, ջամբելով ու ներշնչելով անոնց ուրիշ, կազմակերպութիւն, լիանք, լիարժեք եւ գլուխ առաջնորդութիւն: Կը կազմէ նաեւ եկեղեցական անկախ երգչախումբ մը, որ իր անդամները երգեցողութեամբ կը հմայէ հասարակականութեան սիրտերը, որոնք բազմախումբ կը փոխան լեցնելու եկեղեցիները:

1937ին կ'անցնի Փարիզ, Սեւրի վարժարանին մէջ պաշտօնավարելու իբր ուսումնապետ եւ փոխ-տեսուչ, լուսահոգի ու բազմավաստակ Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի կողքին:

Պատերազմի արհաւիրքին տակ, 1939ին կը վերադառնայ Վենետիկ, կը ստանձնէ Մուրատ-Ռաֆայէլեանի մէջ մատակարարի դժուարին պաշտօնը, կատարելով նաեւ ուսուցչութիւն: 1942ին կ'անցնի Ս. Ղազար: Պատերազմէն վերջ, 1947ին կը մեկնի Պուլիս, Միլիթարեան վարժարանին Տեսուչի պաշտօնով: 1950ին, լուսահոգի Հ. Բենիկ Վրդ. Շամանաճեանի հիւանդութեան պատճառով՝ կը ստանձնէ նաեւ կալուածներու մատակարարի պաշտօնը, եւ անոր մահէն վերջ, 1952ին, կը նշանակուի Մեծաւոր: Կը ստանայ վարժարանին քաղաքական Տեսուչի տիտղոսը, հասարակութեամբ՝ Կրթական Նախարարութեան:

22 Մարտ 1952ին պաշտօնապէս կը վերակազմուի, Հ. Յակոբոս Վրդ. Կ. Նախաձեռնութեամբ եւ պետական ճանաչումով, Միլիթարեան Նախկին Սաներու Միութիւնը, որու առաջին հիմնադրութիւնը մինչեւ Մկրտիչ Պէշկեպեանի կ'երկարէր: Դարձեալ վարչարարին ներշնչումով, Սանուց Միութիւնը կը ձեռնարկէ իր կոյն՝ Պուլիս հանդէսող Միլիթարեան Հայրերու, ինչպէս նաեւ չորս մեծ Միլիթարեան տաներու՝ Ս. Պէշկեպեանի, Ս. Հէքիմեանի, Ս. Թլիսեանի եւ Պ. Աղամեանի շիրիմներուն շինութեան եւ բարեկարգումին:

1961ին, իր յիմնամետ յորերեանէն վերջ, տեսչական պաշտօնը կը յանձնէ Հ. Անտոն Զիւանեանի, շարունակելով մնալ վարժարանի մեծաւորը:

1964ին, արակցութեամբ իր աշխատակից վարդապետին, Կիրազորէ վարժարանի փոխարդարութեան ծրագիրը: Այսպէս Միլիթարեան վարժարաններու հնազոյնը, թողնելով իր ասելի քան հարիւրա-

մեայ կայանը Սաղազադանի թաղին մէջ, որ գործատեղի դարձած ըլլալով նարատաւոր պայմաններ չէր ընծայէր զպրոցական միջավայրի մը համար, կ'անցնի Պոմոնթիի նորաշէն թաղամասը՝ խոշոր եւ յարմարաւէտ շէնքի մը մէջ, որ նախապէս տեփախանութիւնը եղած էր անգլիկոսացի իշխանուհիի մը: Հոս քանի մը տարուան ընթացքին վարժարանի աշակերտութիւնը ասելի քան կը կրկնապատկուի, հասնելով 1973ին շուրջ 280ի: Դժբախտաբար, ինչ ինչ պետական տեղումներ, այդ թուականէն սկսեալ կը դժուարացնեն վարժարանին կեանքը: Պատահաբար կը ցնցեն առողջական միջակայ ծերութեանը Հ. Յակոբոս Վրդ. ինչ, որ 1978ին վերջնականօրէն կը քաշուի Վենետիկ, Ս. Ղազարի իր մենաստանը, ուր կ'անցնէ կեանքի վերջին տարիները՝ շրջապատուած անգլիկոսացիներու գուրգուրանքով: Վերջին ամիսներուն, քոլորովին ուժասպառ, անկողնի վրա ծառայէր եւ փոխադրուած էր Վենետիկի քաղաքապետական ծերանոցը՝ վայելելու համար հարկաւոր բժշկական խնամքները: Իր ֆիզիքական կազմը կը հիւծէր ինքնաբերաբար՝ տարիներու լեցրած տակ, մինչեւ որ 26 Յուլիի առաւօտեան ժամը 4ին կ'աւանդէր իր բազմավաստակ հոգին:

Հանգրուանէ հանգրուան, իր բոլոր կեանքի ընթացքին, Հ. Յակոբոս ցանաժ էր ամէն կողմ բարիք. եւ նշանն ասոր՝ այն յարգանքը անմիջապէս եւ տիրալիր փարուով՝ զոր բոլոր իր աշակերտներն ու բարեկամները կը տածէին իր անձին հանդէպ:

Կրթական գործունէութեան եւ մատակարարական բազմազաւ կեանքին առնչութեամբ, իր վարկեաններն օգտագործելով, Հ. Յակոբոս Վրդ. կատարած է նաեւ գրական աշխատանքներ: Ստորագրած է յօդուածներ եւ թղթակցութիւններ «Բազմավէպ»ի մէջ եւ թարգմանած է հետեւեալ գործերը.

- 1) ՌԸՆԷ ՊԱՁԵՆ, Երկիրը որ կը մեռնի (տպ. 1926, էջ 263):
- 2) ԷՄԻԼԻՈՅ ՍԱԼԿԱՐԻ, Երկու հագար մղոմ Ամերիկայի ճերմու (տպ. 1931, էջ 312):
- 3) ԲՕԼ ՏՄՐՈՊԻՎԻԼ, Կուգ Սիմոն, Վրդապետական յեղափոխութենէ (տպ. 1924, էջ 67):

Ունի նաեւ ձեռագիր աշխատանքներ. Պատմութիւն Միջին դարու, ինչպէս նաեւ բառարանային պրոպագանդային եւ սրբագրութիւններ:

Հ. Ն. Տ. Ն.

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ԳԼԸՆՃԵԱՆ

(1948–1983)

1983 Մարտ 2: Փարիզյն հասնող հեռագրային անակնկալօրէն կը գրեթէ ցաւալի կորուստ մը՝ Միաբանութեան համար: Քեանայն Հալէպ փրկարող ճամբուն վրայ, նախորդ օրը ինքնաշարժի աղետալի արկածի մը զոհ գացած էր Միսիթարի ուղիներէն անխտաւար միաբան՝ Հ. Համազասպ Գլընճեան, որ հազիւ երեք ամիսէ ի վեր կը պաշտօնավարէր Սեւրի Սամուէլ – Մուրատեան վարժարանին մէջ, որպէս Ուսումնապետ:

Տարաբախտ վարդապետը մեկնած էր Մուրիա, հօրը հիւանդութեան տխուր առիթով տւելով իր ժամանակը՝ մահուան անկողինին մէջ, եւ կատարած անոր յուղարկաւորութիւնը՝ չաբաթ մը առաջ: Կը վերադառնար Փարիզ, Հալէպի ճամբով, խանդավառ ծրարներով:

Ծնած էր Քեանայ, 1948ի Մարտ 5ին: Ս. Ղազար վը հասնէր 1962ի Օգոստոս 10ին, ուր արդ օրերուն տեղի կ'ունենար հանդիսաւոր բացումը Միսիթար Աբբահօր պղնձեայ մեծ արձանին. փոքրիկ Վահէի սրտին ու հոգիին մէջ (այս էր իր անունը՝ առաջ աւագանէն) կը վառէր կայծ մը՝ մեծ Սեբաստացիին հոգիէն, որուն ուղեց հաւատարիմ մնալ իր ամբողջ կեանքով:

Միջնակարգ ու լիբէրալական ուսումնները կը բոլորէր շատ փայլուն յաջողութեամբ. 1970ի Հոկտ. 3ին՝ մշտնջենաւոր ուխտերով կ'անդամակցէր Միաբանութեան: Փիլիսոփայութեան եւ աստուածաբանական գիտութիւններու կը հմտանար Հոռմի միջազգային Գրիգորեան Համալսարանին մէջ. կուսակրօն քահանայ կը ձեռնադրուէր Ս. Ղազար՝ 1974ի Հոկտ. 6ին:

Այդ տարիէն իսկ կը սկսի իր գրական աշխատակցութիւնը՝ «Բաղմաւէպ» ու «Հայ Ընտանիք» թերթերուն: Յաջորդաբար կը յայտնաբերէ դաստիարակի ազնիւ ձիրքեր:

1974–1976 Ս. Ղազարն է իր աշխատավայրը:

1976–1979 կը պաշտօնավարէ Մուրատ–Միսիթար վարժարանի մէջ, իրերեւ փոխ–Ուսումնապետ:

1979–1980 դարձնալ Ս. Ղազար՝ որպէս խմբագիր «Հայ Ընտանիք»-ի:

1980–1982 կ'անցնի Պուէնոս Այրէս, որպէս Ուսումնապետ այնտեղի Միսիթարեան վարժարանին, ուր շուտով կը ստեղծէ մեծ խանդավառութիւն:

1982ի Դեկտեմբերին կ'անցնի Փարիզ, որպէս Ուսումնապետ:

Հայր Համազասպի վաղաճառ և անդրադարձն մահը մեծ կորուստ մըն է ոչ միայն Միսիթարեան Միաբանութեան համար, այլ եւ ընդհանրապէս Հայ մշակոյթին՝ որով, հակառակ իր անխտաւար տարիքին, բերած էր արդէն զնահատելի նպաստ մը:

Մեր սրտագին մարթանքը եւ հոգեմոռնչ աղօթքն է որ Տէրը լեցնէ նոր ընծիւղներով՝ Հ. Համազասպի տարաբախտօրէն թողած պարապը:

ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վարք Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի, թրգմ. գրաբարէ, 1240 թուականի ձեռագրէ մը հանուած (Սոփերք, ԺԴ., 1854), վեներտիկ – Ս. Ղազար, 1974, էջ 52:

«ԲԱԶՄԱՎԷՊ»-ի մէջ լոյս տեսած յօդուածներ.

Ժագ Մարիքէն՝ մարդկայնապաշտ իմաստասէրը, 1974, թ. 1–2, էջ 191–206:

Խոհեր Կ. Կ. Պատմութի «Փաստեր ու մտքեր»-ու մասին, 1974, թ. 3–4, էջ 411–422:

Աստուծոյ եղանակն յուղարկաւորը (Փրոֆ. Գաբրիէլ Վահանեան), 1975, թ. 1–2, էջ 202–223:

«ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ»-ի մէջ լոյս տեսած յօդուածներ.

Տաղանդաւոր գրագէտ Շահան Շահնուրի յիշատակին, 1974, թ. 11–12, էջ 26–27:

Վաստակաւոր յոբիւսար Մուշեղ Իշխան, 1975, թ. 1–2, էջ 36:

Գիրքերու հետ, 1975, թ. 1–2, էջ 39: 1975, թ. 3–4, էջ 20–21: 1979, թ. 7–9, էջ 27–28:

Միտք՝ որ երկաթը կը ծռէ, 1975, թ. 5–6, էջ 19–20:

Փիւնիկեցիները (թրգմ.), 1975, թ. 7–8, էջ 26–30: Թ. 9–10, էջ 19–21: Թ. 11–12, էջ 26–30:

Մեծատաղանդ բանաստեղծ Հրանտ Նազարեանց (*Թրդմե.*), 1975, *թ.* 7-8, *էջ* 22-24, 30:

Հայկական եղեռնը (Պատմական ակնարկ), *Թրդմե.*, 1975, *թ.* 7-8, *էջ* 34-37:

Մխիթար Աբրահոբ գրական արտադրությունները, 1976, *թ.* 1-2, *էջ* 14-15:

Մեսիայի բեմադրիչին հետ, 1976, *թ.* 1-2, *էջ* 40-42:

Վերսիի հայ ուխտաւորը՝ Կարպիս Պոյանեան, 1976, *թ.* 3-4, *էջ* 11-13:

Անմախքնաբան անարկություն մը, 1976, *թ.* 3-4, *էջ* 36-37:

Թիրիչ-Միր, 1976, *թ.* 5-6, *էջ* 15-16:

Իմաստասերի մը վկայությունը, 1976, *թ.* 7-8, *էջ* 15-17:

Հինգերորդ Աւետարանիչը (*Հեղ. Մարտոյ Փոմփիլոյ*), 1976, *թ.* 9-10, *էջ* 10-15: *թ.* 11-12, *էջ* 10-17: 1977, *թ.* 1-2, *էջ* 4-13: *թ.* 3-4, *էջ* 4-11: *թ.* 5-6, *էջ* 4-11: *թ.* 7-8, *էջ* 4-10: 1978, *թ.* 1-2, *էջ* 31-33: *թ.* 3-4, *էջ* 25-28: *թ.* 5-6, *էջ* 17-23: *թ.* 7-8, *էջ* 16-23:

Կարպիս Պոյանեանի փառքի մամբան, 1976, *թ.* 9-10, *էջ* 16-20:

Հրեշտակներ եւ միգամածներ՝ ի՞նչպէս հաշտեցնել զանոնք, 1976, *թ.* 9-10, *էջ* 40-45:

Սերկէյ Պարամանով եւ իր պատգամը, 1978, *թ.* 1-2, *էջ* 20-23:

Ալպերթ Այնշթայն, 1978, *թ.* 5-6, *էջ* 4-7:

Ալպերթ Այնշթայն՝ 20րդ դարու Կոպեռնիկը, 1979, *թ.* 5-6, *էջ* 10-14:

Նուկուսալիոյ ողբերգական Զատիկը, 1979, *թ.* 5-6, *էջ* 20:

Գիտական բացառիկ նորություն մը Բիւրականէն, 1979, *թ.* 5-6, *էջ* 28:

Լեզուն որ պէտք է ապրի (*Խմբ.*), 1979, *թ.* 7-9, *էջ* 1-2:

Էպլա՝ հեռաւոր անցեալի պերճախօս վկան, 1979, *թ.* 7-9, *էջ* 17-18:

Կարպիս Պոյանեանի մոր յաղթանակները Նիւ Նորքի մէջ, 1979, *թ.* 7-9, *էջ* 16:

Հայաստանի զրօսաշրջութեան Նախարարը՝ Իսալիոյ եւ Ս. Ղազարի մէջ, 1979, *թ.* 7-9, *էջ* 44-45:

Նրկինքի աշխարհակալները, 1979, *թ.* 7-9, *էջ* 74-76:

Ինչո՞ւ օրը չ'երկարիր, 1979, *թ.* 7-9, *էջ* 79:

Ժամ Գառգու՝ նորընտիր Ակադեմիկոսը, 1979, *թ.* 10, *էջ* 24:

Բեմապարի նոր աստղ՝ Մարինա Մաւեան, 1979, *թ.* 10, *էջ* 30:

Ալիսիա Թերզեան եւ ժամանակակից երաժշտութիւնը, 1980, *թ.* 8-10, *էջ* 20-24:

Մայրամուտի շողեր, 1980, *թ.* 8-10, *էջ* 60-61:

Յարութիւն Պարիկեան՝ «Ժուտոյ»ի Արժանքինի ախոյեան, 1980, *թ.* 11-12, *էջ* 43:

Ամսվերջի հանդէս Պուէնոս Այրէսի Մխիթարեան վարժարանի, 1980, *թ.* 11-12, *էջ* 47-49:

Հայ նրգի դրօշակիրը՝ Ժամ Ալմուխեան, 1981, *թ.* 3-4, *էջ* 43-46:

22րդ տարեդարձ Արժանքինի Մխիթարեան «Ս. Վարդան» սկսուսական խումբին, 1981, *թ.* 5-7, *էջ* 62:

Բեմադրութիւն «Մեծապատիւ Մուրացեաններ»ու Պուէնոս Այրէսի մէջ, 1981, *թ.* 5-7, *էջ* 63-64:

Նոր լոյս յաւիտեանական խորհուրդին վրայ (Մարդու ծագումը), 1982, *թ.* 1-2, *էջ* 8-11:

25ամեայ յորելեան Պուէնոս Այրէսի Մխիթարեան վարժարանին, 1982, *թ.* 3-4, *էջ* 31-34:

Ամսվերջի հանդէս Մխիթարեան վարժարանի, 1982, *թ.* 3-4, *էջ* 35-36:

Տոն Լուիս Թոփչեան, 1982, *թ.* 3-4, *էջ* 37-40:

Հ. Ն. Տ. Ն.

2. ԱԲՐԱՀԱՍ ՎՐԴ. ԱԴԱՍԵԱՆ

(1911–1984)

Ծնած Մարտին, 1911 Նոյեմբեր 22ին, առեր ակադեմիկոս անունով՝ Յովհաննէս, հանդուցեալը իր ծնողքին հետ ապրած էր տառապալիքի օրեր՝ 1915ի ջարդի եւ արհաւիրքի շրջանին։ 1925ի Հոկտեմբեր 2ին կը մտնէ Ս. Ղազար, 1931 Յուլիս 12ին ուխտերով կ'անդամակցի Միաբանութեան, 1936 Դեկտեմբեր 25ին կ'օծուի կուսակիցի քահանայ, 1955 Օգոստոս 14ին կը ստանայ ծայրագոյն վարդապետութեան զաւագանը Ուլուհոճեան Աբրահօր ձեռքէն։

Իր իմաստասիրական եւ աստուածաբանական բարձր ուսումնեւրը յաջողութեամբ կատարած է Հոմա՝ Ս. Անսելմոսի կաճառին մէջ։

Հ. Աբրահամ, շատ կանուխէն մեծաւորներէն կը սահմանուի առաքելական, հոլոսական եւ կրթական ասպարէզի, տառնաճնելով միաժամանակ մատակարարական դժուարին դործեր։ Կը պաշտօնավարէ նախ Աղեքսանդրիոյ Միսիթարեան նորաբաց սլաթարանին մէջ, տեսուչ՝ Հ. Բերտէ Վրդ. Զրաքեանի առաջնորդութեան տակ (1937–1940)։ Ապա՝ նոյն քաղաքին մէջ, պատերազմի շրջանին, իբր ժողովրդապետ հայ կաթողիկէ համայնքին (1940–1946)։ Անկէ կ'անցնի Հայկալի Միսիթարեան վարժարանը, Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանի տեսչութեան օրով (1946–1956)։ Այնուհետեւ զինք կը գտնենք Միացեալ Նահանգներ, որպէս հոգեւոր հովիւ Փաթերաքնի, Նիւ Ճըրդի (1956–1960)։ 1960ին, Ֆրանսայի հայ կաթողիկէ Առաջնորդ-Եջսարք՝ Կարապետ Ամատունիի խնդրանքով, Ամերիկայէն կ'անցնի Փարիզ, ուր մեծ նուիրումով եւ գնահատելի գոհողութիւններով կը ծաղկեցնէ ու կը շնորհէ հայ կաթողիկէ ժողովրդապետութիւնը եւ աւուր Ս. Խաչ եկեղեցին։

1972–1973ին զինք կը գտնենք Ս. Ղազար՝ որպէս գործակալ վանքին։ Ապա տարի մը կը պաշտօնավարէ Գահիրէ՝ իբր փոխ-ժողովրդապետ։ Այնուհետեւ կ'անցնի Պէյրութ (1974–1976), Ղարձեալ Հայրէշ (1976–1977) եւ հոսակ՝ Պէյրութ, իբրեւ խոստովանահայր Միսիթարեան շնորհապատմութեամբ, ժրջան նուիրումով ատանձնելով նաեւ

Միաբանութեան տեղական կարածներուն մատակարարութիւնը։ Հոս կը մնայ մինչեւ մահը, որ տեղի կ'ունենայ կարճատեւ հիւանդութենէ մը ետք, թոքերու ծանր բորբոքումի հետեւանքով, Սեպտեմբեր 5ին, զօրացած՝ Ս. Եկեղեցւոյ խորհուրդներով եւ հոգեկից Հայրերու ջերմ աղօթքներով։ Թաղումը կը կատարուի Պէյրութի Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ։

Հ. Աբրահամ Վրդ., իսկապէս հակա գոհողութիւններով, ձեռնհասօրէն վանքի կարուածներուն պաշտպան ու պահապան կանգնեցաւ, լիբանանեան ներքին պատերազմներու ծանր օրերուն։ Փիզիքապէս ալ հիւժեցաւ, որուն հետեւանքով տկար մարմինը չկրցաւ տոկալ անակնկալ հարուածին։

Իր պայծառ օրինակը, նուիրումը, չարքաշ ու անձնուէր կենցաղը, խանդավառ կոչումներու աղբիւր թող դառնայ՝ Միսիթարեան նոր սերունդներու արտին մէջ։

Ինքը հովուական ու մատակարարական գրադանքներուն առնչութեամբ, Հ. Աբրահամ Վրդ. ժամանակ դառն է նաեւ բանասիրական, պատմադիտական ու ընդլայնական ուսումնասիրութիւններով ի հանդէս դարձաւ։

Հմուտ էր արաբերէնի եւ այլ արեւելեան լեզուներու։ սահուն կը խօսէր ու կը գրէր քաղմարթիւ եւրոպական լեզուներ։

Ուսումնասիրած է Պելլաւո-Հորի եւ Եպիփանի արար պատմադիրները, եւ անոնցմէ տուած է թարգմանութիւններ՝ Հայոց պատմութեան վերաբերող հարցերու [Բագմալի, ՃԺԱ (1953), էջ 77–82, 130–134, 193–197, ՃԺԲ (1954), էջ 182–185, 246–249, 299–302, ՃԺԳ (1955), էջ 62–64, 143–146։ ՃԺԵ (1957), էջ 153–159, 207–212, 262–266, ՃԺԶ (1958), էջ 96–104]։ Քննարկած է լեզուներու դիցաբանութեան եւ բնապաշտական արմատները, պատրաստած է հայերէն տառնական եւ բնապաշտական արմատները, պատրաստած է հայերէն տառնական համեմատութիւններ՝ օտար հին ու նոր լեզուներու հետ [Բագմալի, ՃԺԸ (1960), էջ 7–12։ Հայ Ընտանիք, 1982, 1–2, էջ 54–55]։

Ունի յղբայրներ եւ աղբակներ՝ Միացեալ Նահանգներու մէջ եւ մինչեւ հեռաւոր Զիլի։ Իր վրտներ եղբայրն ալ՝ Հ. Արսէն Վրդ. Աղամեան, անդամ է Միսիթարեան Միաբանութեան ու կը պաշտօնավարէ Տէր-Զօրի մէջ, իբրեւ հոգեւոր հովիւ։ Պորին ցաւակցութիւններ բոլորին։

Աղօթք, խոնկ եւ արցունքներ ունինք, սիրելի Հ. Աբրահամ, քու հեռաւոր գերեզմանիդ վրայ, ուր ուխտի պիտի գանք՝ խոնարհելու քու անխնայ գործունէութեանը եւ անսթեւեթ նուիրումիդ յիշատակին։

Հ. Ն. Տ. Ն.